

Պատասխաններ

XI-դասարան

1.Ամենայն հայոց բանաստեղծ, 2 հմուտ, հանճարեղ լռեցի, 3.անհաս Արարատը մեր նոր քերթության , 4.մեծ լռեցի, 5.Ժողովրդի ազնիվ կենսագիր:

1.Թումանյան, 2,3 Չարենց, 4.Մահարի, 5.Պ.Սևակ:

Գրվել է հայոց մեծ եղեռնի օրերին: Բանաստեղծը խոսում է ավերվող, արյունախեղ հայրենիքի մասին, սակայն հուսալքության խոսք չի բերում:

(Յուրաքանչյուր երեխա ազատ է իր շարադրանքի մեջ, միայն ՝ ճշմարիտ և գեղեցիկ):

2.Հայ գրականության Վարպետը Ավետիք Բսահակյանն է , նրան Վարպետ է անվանել Եղիշե Չարենցը 1925-ին, Վենետիկյան հանդիպման ժամանակ:

«Աբու- Լալա-Մահարի» պոեմին նախորդել են ՝ «Դեպի անապատ հողմը կտուրա» (1901), «Օտա՛ր , ամայի՛ ճամփեքի վրա » (1903), «Ես կուզեի արևավառ անապատը ամայի»(1905), «Կյանքի ժխորից մտա անապատ» (1902), «Եվ ճամփեքի մեջ , ամայի դաշտում» (1902):

Կյանքից , հասարակական-քաղաքական ինտրիգներից հոգնած էին և՛ 11-րդ դարի արաբ բանաստեղծը, և՛ 20-րդ դարի հայ բանաստեղծը:

Երկուսն էլ ատում են մարդուն , կեղծ ու պատիր օրենքները: Նրա վեճը աշխարհի հետ տիրող արատների ու անօրինությունների մասին է, որն ավարտվում է արևի ու ազատության ներբողով, հոգեկան ներդաշնակությամբ անխարդախ բնավորության հետ:

3.Անանձնական սիրո կրողը մեր գրականության վաղամեծիկ հանճար Միսաք Մեծարենցն է:

«Տու՛ր ինձի, Տեր», «Իրիկունը», «Հովը», «Հյուղը», «Ըլլայի՛ , ըլլայի՛ » շարքը:

Արյուն է եղել աշխարհում:

-Եղել է եղեռն ու կռիվ:

Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:

Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,

Արև է երգել ու գարուն այս հիվանդ , հանճարեղ պատանին:

4.«Տխրություն», «Fatum», «Ինձ չես սիրում», «Հրաշք աղջիկ», « Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Կարուսել», «Էստոնական երգ» և այլն:

Կախարդական մի շղթա երկնքում՝

Աներևույթ, որպես ցավը խոր հոգու...

Իջնում է նա հուշիկ , որպես իրիկուն,

Օղակնելով լույս աստղերը մեկմեկու: